ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, 6-01-26,6-02-27 shahumyan-gyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7,8,9,10 և 11-րդ հոդվածներով՝ Շահումյանի գյուղական համայնքի ավագանին *որոշում է.*

1.Սահմանել 2013թվականի

ա) տեղական տուրքերի դրույքաչափերը՝համաձայն թիվ 1 հավելվածի,

բ)տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՐԻՄ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
4. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
5. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված թիվ 1
Շահումյան համայնքի ավագանու
27 դեկտեմբերի 2012թ.
թիվ 23-Ն որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ *Հիմնական օբյեկտների համար՝* ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ բ) սույն կետի ,, ա ,, ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ բ.ա) 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ բ.բ) 501քմ-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ բ.գ) 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝* գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	15.000դրամ 30.000դրամ 50.000դրամ 70.000դրամ 3.000դրամ 5.000դրամ
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման արդիականացման աշխատանքների(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ ա) չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ բ)բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների վեռնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա բացի սույն կետի ,,ա,,ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար առաջին կետով սահմանված	3.000դրամ

		նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. գ) նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում `ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը	
3.		Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է	2.000դրամ
4.		Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝ 1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար 2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	3500- ական դրամ 4000-ական դրամ
5.		Համայնքի տարածքում՝ ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և(կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել գ) խանութներում ,կրպակներում ,տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել	350դրամ . 150.000դրամ 30.000դրամ
6.		Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ա)առևտրի օբյեկտների համար բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար գ)բաղնիքների (սաունաների) համար դ)խաղատների կազմակերպման համար ե)շահումով խաղերի կազմակերպման համար զ)վիճակախաղերի կազմակերպման համար	25.000դրամ 50.000դրամ 200.000դրամ 500.000դրամ 250.000դրամ 100.000դրամ
7.		Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ ա)այլ արտաքին գովազդի համար՝ բ) դատարկ գովազդային վահանակների համար՝	1500դրամ 700դրամ
8.		Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել	5000դրամ

Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցի կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 2
Շահումյանի համայնքի ավագանու
27 դեկտեմբերի 2012թ.
թիվ 23-Ն որոշման

2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել	1.000դրամ
2.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար սահմանել ամսեկան	5 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ